

«Տեղահանված կանայք որպես փոփոխությունն նախաձեռնողներ» ծրագիր

Ի՞նչ է քաղաքացիական հասարակությունը, ինչպե՞ս է այն դրսևորվում Հայաստանում, ի՞նչն է խթանում քաղաքացիական ակտիվության բարձրացմանը և ինչպե՞ս կարող են Հայաստանում ապաստանած սիրիահայ կանայք առկա խնդիրներին տալ առարկայական լուծումներ: Հարցեր, որոնք բարձրացվեցին ա/թ. հոկտեմբերի 3-ին «ՀԱԼԵՊ» ՀԿ-ում մեկնարկած «Տեղահանված կանայք որպես փոփոխությունն նախաձեռնողներ» ծրագրի շրջանակում, և գտան լուծումներ ի շնորհիվ Եվրասիա Համագործակցություն հիմնադրամի (Eurasia Partnership Foundation-Armenia) ծրագրի տնօրեն Գայանե Մկրտչյանի և ծրագրի ղեկավար Վարուժան Ավանեսյանի: Մ/թ. հոկտեմբերի 4-ին հավաստագրված կառավարման խորհրդատու և միջազգային թրեյներ Artak Aloyanի ուղղորդությամբ ծրագրին մասնակից սիրիահայ կանայք բացահայտեցին համագործակցելու ուժը, շրջապատող խնդիրներին միահամուռ ուժերով լուծումներ տալու ճանապարհը, հաղթող թիմ լինելու և արդյունավետ թիմային աշխատանք իրականացնելու ձևաչափը, և գաղափարն իրականություն դարձնելու ուղին: Բանակցության ուժը, թե որքան կարևոր է այն առօրյայում և գործնական հարաբերություններում: Մ/թ. հոկտեմբերի 5-ին «Տեղահանված կանայք որպես փոփոխությունն նախաձեռնողներ» ծրագրի մասնակիցները հավաստագրված կառավարման խորհրդատու և միջազգային թրեյներ Artak Aloyanի շնորհիվ ճանաչեցին իրենց բանակցային թույլ և ուժեղ կողմերը: Իսկ թույլ և ուժեղ կողմերի գիտակցումը գործնական աշխարհում հաղթական ճանապարհի ուղենիշներից մեկն է: Մ/թ. հոկտեմբերի 8-ին ծանոթանալով վերբալ և ոչ վերբալ հաղորդակցության մեթոդներին ու սերտելով հանրային խոսքը և ներկայացման հմտությունները հավաստագրված կառավարման խորհրդատու և միջազգային թրեյներ Artak Aloyanի կողմից տրամադրված դասախոսության շնորհիվ՝ «Տեղահանված կանայք որպես փոփոխությունն նախաձեռնողներ» ծրագրի մասնակիցները հանդես եկան ազդեցիկ և համոզիչ ելույթներով՝ բարձրաձայնելով հանրության առջև ծառայած խնդիրները: Համատեղելով դասընթացների շրջանակում ձեռք բերված նոր գիտելիքներն և հմտությունները՝ ա/թ. հոկտեմբերի 9-ին «Տեղահանված կանայք որպես փոփոխությունն նախաձեռնողներ» ծրագրի մասնակիցները դասընթացավար Artak Aloyanի ուղղորդությամբ մանրամասնորեն ներկայացրեցին իրենց կողմից մշակված ծրագրային գաղափարները: Վերջիններս ուղղված են համայնքում առկա խնդիրների լուծմանը: «ՀԱԼԵՊ» ՀԿ-ում մեկնարկած «Տեղահանված կանայք որպես փոփոխությունն նախաձեռնողներ» ծրագրի շրջանակում ա/թ. հոկտեմբերի 10-ին մասնակիցների երկրորդ խումբը Եվրասիա Համագործակցություն հիմնադրամի (Eurasia Partnership Foundation-Armenia) ծրագրի տնօրեն Գայանե Մկրտչյանի և ծրագրի ղեկավար Վարուժան Ավանեսյանի միջոցով ծանոթացան քաղաքացիական հասարակության դրսևորումներին ՀՀ-ում և բացահայտեցին, թե ինչպես են դրանք խրախուսում քաղաքացիների ակտիվ մասնակցությունը որոշումների կայացմանը: Ձեռք բերելով նոր հմտություններ և գիտելիքներ՝ մասնակիցները հանդես եկան ծրագրային գաղափարներով՝ ուղղված համայնքի խնդիրների լուծմանը: Որո՞նք են կամավորության և սոցիալական աշխատանքի ձևավորման նախադրյալները Հայաստանում, ինչպե՞ս է տարբերվում սոցիալական աշխատանքը կամավորությունից, ի՞նչ ազդեցություն են ունենում սոցիալական աշխատանքը և կամավորությունը քաղաքացու ձևավորման գործում: Հարցեր, որոնց պատասխանները տրվեցին ա/թ. հոկտեմբերի 15-ին Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի նախագահ, ՇՕՖ-ի Երեխաների աջակցության կենտրոն-

հիմնադրամի գործադիր տնօրեն Միրա Անտոնյանի կողմից «Տեղահանված կանայք որպես փոփոխություն նախաձեռնողներ» ծրագրի շրջանակում: Ինչպե՞ս վեր հանել հուզող խնդիրները և մշակել դրանց լուծմանն ուղղված ծրագրեր, ինչպե՞ս վարել բանակցություններ, որոնք միայն կարող են իրենց նպաստը բերել ծրագրերի կյանքի կոչմանը և ինչպե՞ս ներկայացնել ծրագրի գաղափարը, որպեսզի այն լինի հավակնոտ և կարողանա ունենալ աջակիցներ: «Տեղահանված կանայք որպես փոփոխություն նախաձեռնողներ» ծրագրի շրջանակում մասնակիցների երկրորդ խումբը ա/թ. հոկտեմբերի 16-ին, 17-ին և 18-ին գտավ վերոհիշյալ հարցերի պատասխանները կառավարման խորհրդատու և միջազգային թրեյներ Artak Aloyanի շնորհիվ: Սոց.գիտ.թեկն., ԵՊՀ Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ, «Հասարակայնության հետ կապեր» մագիստրոսական ծրագրի ղեկավար, SPRING PR ընկերության համահիմնադիր Նվարդ Մելքոնյանի շնորհիվ սիրիահայ կանայք ծանոթացան ՋԼՄ-ների սոցիալական դերին և նշանակությանը, ՋԼՄ-ների հետ արդյունավետ հարաբերությունների ձևավորման հիմքերին և գիտելիքներ ձեռքբերեցին սոցիալական հարթակներում PR արշավների պլանավորման մասին: Դասընթացները տեղի ունեցան ա/թ. հոկտեմբերի 19-ին և 20-ին «Տեղահանված կանայք որպես փոփոխություն նախաձեռնողներ» ծրագրի շրջանակում: Հիշեցնենք՝ «ՀԱԼԵՊ» ՀԿ-ն իրականացնում է «Տեղահանված կանայք որպես փոփոխություն նախաձեռնողներ» ծրագիրը ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան ֆինանսական աջակցությամբ: Նորովի բացահայտելով պատերազմի, հալածանքների և բռնությունների հետևանքով Հայաստանում հաստատված սիրիահայ կանանց ներուժը, զինելով նրանց համապատասխան գիտելիքներով և հմտություններով, մասնակից դարձնելով հասարակական գործունեությանը և տրամադրելով քոչինգ/ուղղորդում հայտնի հասարակական գործիչների կողմից՝ կանանց հզորացման ծրագրի նպատակն է խթանել սիրիահայ կանանց ակտիվ մասնակցությունը հայաստանյան քաղաքացիական կյանքում:

Աղբյուրը և նկարները կարող եք գտնել [այստեղ](#):